ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Սույն Համաձայնագրի մասնակից պետությունները, այսուհետ՝ մասնակից պետություններ,
1992 թվականի մայիսի 15-ի՝ Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից երկրների տնտեսվարող կազմակերպությունների միջեւ հաշվարկների բարելավման ապահովման համար միջոցների մասին Անկախ Պետությունների Համագործակցության պետությունների ղեկավարների խորհրդի Համաձայնագրի 5-րդ հոդվածին համապատասխան ստեղծված Անկախ Պետությունների Համագործակցության Տնտեսական դատարանի կարգավիճակի հաստատման նպատակով, համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1

Հաստատել Անկախ Պետությունների Համագործակցության Տնտեսական դատարանի մասին Կանոնադրությունը, որպես սույն Համաձայնագրի անբաժանելի մաս:

ՀՈԴՎԱԾ 2

Սահմանել մասնակից պետություններից Անկախ Պետությունների Համագործակցության Տնտեսական դատարանի կազմում ընտրվող (նշանակվող) դատավորների քանակի քվոտան՝ 2 մարդ:

ՀՈԴՎԱԾ 3

Անկախ Պետությունների Համագործակցության Տնտեսական դատարանի ֆինանսավորումը իրականացվում է մասնակից պետությունների հավասար բաժիններով՝ ռուբլուն համարժեք: Անկախ Պետությունների Համագործակցության Տնտեսական դատարանի տեղակայման վայրը Մինսկ քաղաքն է:
Անկախ Պետությունների Համագործակցության Տնտեսական դատարանի պահման ծախսերը եւ նրա աշխատակազմի քանակը հաստատում է Համագործակցության մասնակից պետությունների Կառավարությունների ղեկավարների առաջարկությամբ պետությունների ղեկավարների Խորհուրդը՝ բարձրագույն տնտեսական, արբիտրաժային դատարանների ներկայացուցիչների մասնակցությամբ:

ՀՈԴՎԱԾ 4

Սույն Համաձայնագիրը բաց է այլ պետությունների կողմից ստորագրման համար: Այն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից, իսկ այն մասնակից պետությունների համար, որոնց օրենսդրությունը պահանջում է նման համաձայնագրերի վավերացում՝ նրանց կողմից ավանդապահին վավերագրերի հանձնման օրվանից:

Կատարված է Մոսկվա քաղաքում 1992 թվականի հուլիսի 6-ին, մեկ բնօրինակով, ռուսերեն: Բնօրինակը պահվում է Բելառուսի Հանրապետության Կառավարության արխիվում, որը սույն Համաձայնագիրը ստորագրած պետություններին կուղարկի Համաձայնագրի հաստատված պատճենները:

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ

1. Անկախ Պետությունների Համագործակցության Տնտեսական դատարանը (այսուհետ՝ Տնտեսական դատարան) ստեղծվում է Անկախ Պետությունների Համագործակցության

մասնակից պետությունների համաձայնագրերի միատեսակ կիրառման եւ դրանց վրա հիմնված տնտեսական պարտավորությունների եւ պայմանագրերի ապահովման նպատակով՝ տնտեսական հարաբերություններից բխող վեճերի լուծման միջոցով:

2. Տնտեսական դատարանի կազմակերպումը, գործունեության կարգը, իրավասությունը սահմանվում են միջպետական համաձայնագրերով եւ սույն Կանոնադրությամբ: Վեճերի լուծման ընթացակարգը սահմանվում է Համագործակցության Տնտեսական դատարանի լիագումար նիստի հաստատած Կանոնակարգով:

3. Տնտեսական դատարանի վարույթին է վերաբերում միջպետական տնտեսական վեճերի լուծումը.

որոնք ծագում են Համաձայնագրերով, Համագործակցության պետությունների ղեկավարների Խորհրդի, Կառավարությունների ղեկավարների Խորհրդի եւ նրա այլ մարմինների որոշումներով (այսուհետ՝ Համագործակցության ակտեր) նախատեսված տնտեսական պարտավորությունների կատարման դեպքում,

Համագործակցության Համաձայնագրերին եւ այլ ակտերին տնտեսական հարցերով ընդունված Համագործակցության մասնակից պետությունների նորմատիվ եւ այլ ակտերի համապատասխանության մասին:

Համագործակցության մասնակից պետությունների համաձայնագրերով Տնտեսական դատարանի վարույթին կարող են փոխանցվել համաձայնագրերի կատարման եւ դրանց հիման վրա ընդունված Համագործակցության այլ ակտերի հետ կապված մյուս վեճերը:

Տնտեսական դատարանը շահագրգիռ պետությունների հայտարարությամբ քննության է առնում վեճերը՝ ի դեմս Համագործակցության կառույցների լիազոր մարմինների:

Տնտեսական դատարանը չի կարող հրաժարվել վեճի լուծումից՝ կիրառման ենթակա իրավական նորմի բացակայության կամ ոչ պարզության պատճառով:

4. Վեճի քննարկման արդյունքներով Տնտեսական դատարանը որոշում է ընդունում, որտեղ սահմանվում է մասնակից պետությունների կողմից Համաձայնագրերի, Համագործակցության եւ նրա կառույցների այլ ակտերի խախտման փաստը (կամ խախտման բացակայությունը) եւ սահմանվում են միջոցներ, որոնք երաշխավորվում են ընդունելու համապատասխան պետության կողմից՝ խախտման եւ դրա հետեւանքների վերացման նպատակով: Պետությունը, որի վերաբերյալ Դատարանը որոշում է ընդունել, ապահովում է դրա կատարումը:

Դատարանի որոշումը պետք է համապատասխանի Անկախ Պետությունների Համագործակցության Համաձայնագրերի եւ այլ ակտերի, ինչպես նաեւ կիրառելի նորմատիվ ակտերի դրույթներին:

5. Տնտեսական դատարանը մեկնաբանում է.

Համագործակցության եւ նրա կառույցների Համաձայնագրերի, այլ ակտերի դրույթների կիրառումները,

նախկին ԽՍՀՄ օրենսդրության ակտերը, դրանց փոխհամաձայնեցված կիրառման ժամանակաշրջանում, այդ թվում տվյալ ակտերի կիրառման թույլատրելիության մասին, որոնք չեն հակասում Համաձայնագրերին եւ դրանց հիման վրա ընդունված Համագործակցության այլ ակտերին:

Մեկնաբանումը իրականացվում է կոնկրետ գործերով որոշումների ընդունման ժամանակ, ինչպես նաեւ պետությունների իշխանության եւ կառավարման բարձրագույն մարմինների, Համագործակցության կառույցների, պետություններում տնտեսական վեճեր լուծող բարձրագույն տնտեսական, արբիտրաժային դատարանների եւ այլ բարձրագույն մարմինների հարցումներով:

6. Տնտեսական դատարանը կազմավորվում է յուրաքանչյուր մասնակից պետությունից՝ դատավորների հավասար թվից:

7. Տնտեսական դատարանի դատավորները ընտրվում (նշանակվում) են Համագործակցության մասնակից պետությունների բարձրագույն տնտեսական, արբիտրաժային դատարանների դատավորների ընտրության (նշանակման) համար մասնակից պետություններում սահմանված կարգով, 10 տարի ժամկետով, խիստ մասնագիտական հիմքով՝ բարձրագույն իրավաբանական կրթություն ունեցող, տնտեսական իրավահարաբերությունների բնագավառում բարձր որակավորման մասնագետներ հանդիսացող տնտեսական, արբիտրաժային դատարանների դատավորներից եւ այլ անձանցից:

Տնտեսական դատարանի նախագահը եւ նրա տեղակալները ընտրվում են այդ Դատարանի

դատավորների կողմից ձայների մեծամասնությամբ եւ հաստատվում են Համագործակցության պետությունների ղեկավարների Խորհրդի կողմից՝ 5 տարի ժամկետով:

Տնտեսական դատարանի նախագահը, նրա տեղակալները եւ դատավորները չեն կարող վաղաժամկետ հետ կանչվել, ինչպես նաեւ պաշտոնից հեռացվել ցանկացած այլ ձեւով, բացառությամբ, երբ հետ են կանչում նրանց ընտրած (նշանակած) մարմինները՝ պաշտոնական դիրքի չարաշահման, հանցագործության կատարման, հիվանդության դեպքերում:

Տնտեսական դատարանի դատավորների վրա՝ նրանց լիազորությունների ավարտի, պաշտոնաթողության, այդ թվում՝ հիվանդության պատճառով, տարածվում են մասնակից պետությունների օրենսդրություններով այդ պետություններում դատավորների համար նախատեսված երաշխիքները:

8. Տնտեսական դատարանի դատավորները անկախ եւ անձեռնմխելի են, ենթակա չեն նստավայր պետության իրավասությանը, առանց Տնտեսական դատարանի համաձայնության չեն կարող դատական կարգով քրեական եւ վարչական պատասխանատվության ենթարկվել, ձերբակալվել, բերման ենթարկվել:

Տնտեսական դատարանի նախագահը, նրա տեղակալները եւ դատավորները չեն կարող ներկայացնել որեւէ պետական կամ միջպետական մարմինների եւ կազմակերպությունների, առեւտրային կառույցների, քաղաքական կուսակցությունների եւ շարժումների, ինչպես նաեւ տարածքների, ազգերի, ազգությունների, սոցիալական եւ կրոնական խմբերի եւ առանձին անհատների շահերը: Նրանք իրավունք չունեն զբաղվել ցանկացած եկամտաբեր գործունեությամբ՝ բացի գիտական եւ մանկավարժական գործունեությունից:

9. Տնտեսական դատարանը իրավունք ունի գործերի քննության համար մասնակից պետությունների մարմիններից, տնտեսվարման սուբյեկտներից եւ պաշտոնատար անձանցից նյութեր խնդրել: Տնտեսական դատարանի իրավասության շրջանակներում ներկայացվող պահանջները պարտադիր են:

10. Տնտեսական դատարանի բարձրագույն կոլեգիալ մարմինն է Լիագումար նիստը:

Լիագումար նիստը բաղկացած է Տնտեսական դատարանի նախագահից, նրա տեղակալներից եւ այդ Դատարանի դատավորներից, ինչպես նաեւ մասնակից պետություններում տնտեսական վեճեր լուծող բարձրագույն տնտեսական, արբիտրաժային դատարանների եւ այլ բարձրագույն պետական մարմինների նախագահներից:

Լիագումար նիստը.

Կանոնակարգով սահմանված կարգով քննության է առնում Տնտեսական դատարանի որոշումների բողոքները: Լիագումար նիստը անցկացնում է իր նիստերը՝ եռամսյակը առնվազն մեկ անգամ: Լիագումար նիստի որոշումները ընդունվում են Լիագումար նիստի մասնակիցների ձայների մեծամասնությամբ եւ հանդիսանում են վերջնական,

երաշխավորություններ է ընդունում տնտեսական վեճերի լուծման դեպքում Համագործակցության եւ նրա կառույցների Համաձայնագրերի, այլ ակտերի կիրառման միատեսակ պրակտիկայի ապահովման նպատակով,

մշակում եւ մասնակից պետությունները եւ Համագործակցության կառույցների քննարկմանն է ներկայացնում մասնակից պետությունների օրենսդրություններում կոլիզիաների վերացման վերաբերյալ առաջարկություններ:

11. Դատավարությունը Տնտեսական դատարանում իրականացվում է Համագործակցությունում ընդունված միջպետական հաղորդակցության լեզվով:

12. Տնտեսական դատարան դիմելը տուրքի վճարում չի պահանջում: Դատարանի կողմից սահմանված դատական ծախսերը դրվում են խախտում թույլ տված կամ անհիմն վեճ հարուցած կողմի վրա:

13. Տնտեսական դատարանի աշխատակազմի քանակը, նրա պահման համար հատկացումների չափը եւ դատավորների աշխատավարձի վճարման պայմանները սահմանում է Համագործակցության պետությունների ղեկավարների Խորհուրդը:

14. Տնտեսական դատարանի նախագահը կազմակերպում է Դատարանի աշխատակազմի աշխատանքը, հաստատում է աշխատակազմի կառուցվածքը եւ հաստիքները, նշանակում է պաշտոնի եւ ազատում է պաշտոնից նրա անդամներին, սահմանում է նրանց աշխատավարձի վճարման պայմանները, իր իրավասության շրջանակներում իրականացնում է այլ լիազորություններ:

Տնտեսական դատարանի ֆինանսավորումը, կենցաղային եւ այլ ապահովումը իրականացվում է մասնակից պետությունների համաձայնեցված որոշմամբ հատկացվող միջոցների հաշվին: Տնտեսական դատարանի տեղակայման վայրում բնակելի տարածքով դատավորների ապահովումը իրականացվում է օտարերկրյա պետությունների դիվանագիտական ներկայացուցիչների աշխատակիցների համար սահմանված կարգով:

15. Տնտեսական դատարանը իրավաբանական անձ է, ունի իր անվանմամբ կնիք:

16. Տնտեսական դատարանի եւ նրա Լիագումար նիստի որոշումները պետք է պարտադիր կերպով հրապարակվեն Համագործակցության տեղեկագրերում եւ մասնակից պետությունների զանգվածային լրատվության միջոցներում:

* Համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1993 թվականի հուլիսի 7-ից: